ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

<<**Տրավ Սիմֆնի**>> **ՍՊԸ**-ի կողմից նախատեսվող << Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի վարչական տարածքի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի <<Սալաքար>> տեղամասի օգտակար հանածոյի հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ երկրորդ քննարկում /2-րդ լսում/:

Վեդի համայնք Գոռավան բնակավայր:
26.03.2024 թ.

2024 թվականի մարտի 20-ին ժամը 15:00-ին << Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում /գյուղ Գոռավան, Գևորգ Մարզպետունի 12/ տեղի ունեցավ <<**Տրավ Սիմֆնի**>> ՍՊ ընկերության /այսուհետ նաև՝ Ընկերություն/ կողմից ներկայացված << Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի << Սալաքար >> տեղամասի օգտակար հանածոյի հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ երկրորդ հանրային քննարկում /2-րդ լսում/:

Հանրային քննարկմանը մասնակցում էին << Արարատի մարզի Վեդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Հ. Ստեփանյանը, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը, համայնքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ներկայացուցիչներ, Գոռավան բնակավայրի վարչական ղեկավար՝ Դ. Ավետիսյանը և գյուղի բնակիչներ, Ընկերության տնօրեն՝ Ա. Բաբայանը և Ընկերության այլ ներկայացուցիչներ, ՇՄԱԳ փորձագետ՝ Նելլի Նասիրյանը :

Հանրային քննարկումը /լսումը/ բացեց և խոսքով հանդես եկավ Վեդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Հրաչյա Ստեփանյանը և հայտնեց, որ << կառավարության 19.11.2014թ. թիվ 1325-Ն/ որոշմամբ սահմանված կարգով (այսուհետ նաև՝ Կարգ) կազմակերպվել և իրականացվում է Ընկերության կողմից ներկայացված << Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի <<Սալաքար>> տեղամասի օգտակար հանածոյի հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ թվով 2-րդ հանրային քննարկումը /2-րդ լսում/:

Ղեկավարվելով Կարգի դրույթներով, Վեդի համայնքի ղեկավարի կողմից հանրային քննարկումների պատասխանատու է նշանակվել Վեդու համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը և խոսքը փոխանցվեց վերջինիս:

Վեդու համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Շ. Բաքոյանը, նշեց, որ քննարկվող հարցի շուրջ 2-րդ հանրային քննարկումն է /2-րդ լսում/, վերջինս առաջարկեց ձեռնարկողին հանդես գալ համապատասխան զեկույցով, որից հետո կիրականացվեն քննարկումները:

Ելույթ ունեցավ ՇՄԱԳ փորձագետ՝ Նելլի Նասիրյանը, վերջինս ներկայացրեց ՇՄԱԳ հաշվետվությանը վերաբերող հարցեր, որից հետո անցան քննարկման փուլին:

Վեդու համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Շ. Բաքոյանը հարցեր ուղղեց Ընկերության ներկայացուցիչներին՝

1. Հանքավայրը որքան տարածք է զբաղեցնելու .
2. Հանքավայրի տարածքի գործառնական նշանակությունը .
3. Արոտավայրի, հողատեսքը ո՞ր կարգի է,
4. Որքան է կազմում հանքավայրի ընդհանուր պաշարները, տարեկան որքան եք արդյունահանելու .
5. Գոռավան բնակավայրից որքան հեռավորության վրա է գտնվում նախատեսվելիք հանքավայրը.
6. Որքան աշխատատեղ եք նախատեսում և պատրաստվում եք ազդակիր բնակավայրից ընդգրկել.
7. Կանաչապատման Ձեր տեսլականը այժմ և ապագայում, կլինի արդյոք հանքավայրին փոշեպաշտպան կանաչ գոտի.
8. Ինչպես եք կարգավորելու ծանր բեռնատարների գերբեռնվածությունը, օգտվելու եք արդյոք համայնքային ճանապարհներից.
9. Փոշեզանգվածի կառավարման ինչ մեխանիզմ եք կիրառելու,լինելու է արդյոք ջրցան մեքենա, թե ոչ.
10. Հումքը որտեղ է վերամշակվելու և վերջնական արտադրանք դառնալու.
11. Պատրաստ եք արդյոք ազդակիր համայնքի հետ հուշագիր կնքելուն.

Հարցերին մասնակի պատասխանեցին Ընկերության ներկայացուցիչ՝ Գ. Հակոբյանը և տնօրեն ՝ Ա. Բաբայանը, վերջիններս հայտնելով, որ ընկերության կողմից նախատեսվում է ստեղծել նոր՝ 10-15 և ավելին աշխատատեղ, ընդգրկելով ազդակիր Գոռավան բնակավայրի և Վեդի համայնքի բնակիչներին:

Նշվեց, որ հանքավայրը գտնվում է Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի վարչական տարածքում, և վերջինիս հեռավորությունը հանքավայրից՝ 1.0 կմ. է: Հանքավայրը գտնվում է բարենպաստ ճանապարհատրանսպորտային պայմաններում:

Հաջորդիվ համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ՝ Սիմոն Կարապետյանը հարցեր ուղղեց Ընկերության ներկայացուցչին՝

1. Կենսաբազմազանության ուսումնասիրություն արվել է արդյոք թե ոչ.
2. Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներ և բուսատեսակներ կան արդյոք Նախատեսնվող հանքավայրի տարածքում.
3. Հանքավայրի տարածքը արդյոք մոտ չէ արգելավայրին.
4. Աղմուկի և փոշեզանգվածի առկայությունը և կարգավորման մեխանիզմները.
5. Գործունեության ժամերի սահմանափակում կլինի արդյոք թե ոչ.
6. Հումքը մշակվելու է տեղում , թե արդյունահանվելու է.

Հարցերին դարձյալ մասնակի պատասխանեց Ընկերության ներկայացուցիչ՝ Գ. Հակոբյանը:

Հաջորդիվ համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ՝ Վահրամ Ծատուրյանը հարցեր ուղղեց Ընկերության ներկայացուցչին՝

1. Հաքավայրում հումքը ինչ եղանակով է արդյունահանվելու,պայթեցում լինելու է արդյոք թե ոչ.
2. Սոցիալ-տնտեսական ինչ ծավալի ներդրումներ եք պատրաստվում անել ազդակիր համայնքում.

Հարցերին դարձյալ մասնակի պատասխանեց Ընկերության տնօրեն ՝ Ա. Բաբայանը և Գ. Հակոբյանը:

Աշխատանքներն իրականացվելու են լեռնատեխնիկական միջոցներով, պայթեցման աշխատանքներ չեն լինելու:

Նախագահողը հարցրեց, թե արդյո՞ք ազդակիր Վեդի համայնքի բնակիչների կողմից կան հարցեր, թե՞ ոչ: Հաշվի առնելով լսարանի դիրքորոշումը՝ հայտարարեց լսման ավարտ:

Ամփոփելով հանրային քննարկման արդյունքներն ազդակիր Վեդի համայնքի ներկայացուցիչները նախնական հավանություն են տալիս «Տրավ Սիմֆնի» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի Սալաքար տեղամասի բացահանքի հանքարդյունահանման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային 2-րդ քննարկմանը /2-րդ լսում/:

Կից ներկայացվում է մասնակիցների ցանկը՝ 1 թերթ և հանրային քննարկումների էլեկտրոնային կրիչը:

Քննարկումների պատասխանատու՝

ՀՀ Արարատի մարզի

Վեդի համայնքի ղեկավար՝ / / Գ. Սարգսյան

Ձեռնարկող՝ «Տրավ Սիմֆնի»

ՍՊԸ -ի տնօրեն ՝ / / Ա. Բաբայան

Վարող ՝ / / Շ. Բաքոյան

Արձանագրող՝ / / Ս. Կարապետյան

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

«Տրավ Սիմֆնի» ՍՊ Ընկերության կողմից ներկայացված՝ << Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի տեղամասի (Սալաքար տեղամասի) բացահանքի հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրվրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ << Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում 20.03.2024թ. տեղի ունեցա հանրային քննարկումների /2-րդ լսում/

Վեդի համայնքի Գոռավան բնակավայր
20.03.2024թ.

h/h	Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը	Ստորագրություն
1.	[illegible]	[illegible]	
2.	[illegible]	[illegible]	
3.	[illegible]	[illegible]	
4.	[illegible]	[illegible]	
5.	[illegible]	[illegible]	
6.	[illegible]	[illegible]	
7.	[illegible]	[illegible]	
8.	[illegible]	[illegible]	
9.	[illegible]	[illegible]	
10.	[illegible]	[illegible]	
11.	[illegible]	[illegible]	
12.	[illegible]	[illegible]	
13.	[illegible]	[illegible]	
14.	[illegible]	[illegible]	
15.	[illegible]	[illegible]	
16.			
17.			
18.			